ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունների ազդեցությունը ԵՎ ՀՀ միգրացիոն քաղաքականության արձագանքը

Քաղաքականության վերլուծություն

Հեղինակ՝ Ալինա Պողոսյան, պ.գ.թ.

Open Society Foundations - Armenia

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ քաղաքականության կրթաթոշակներ նախաձեռնության ծրագրի շրջանակներում դրամաշնորհ N **18833**: Հոդվածում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակի տեսակետը և կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու տեսակետների հետ:

Երևան
2015

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ 3

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

1. ՌԴ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ 6

2. ՌԴ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ..... 12

3. ՀՀ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ 19

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ 28

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

ԱԱԾ	Ազգային անվտանգության ծառայություն
ԱՄՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԳԾ	Գործողությունների ծրագիր
ԴՄԾ	Դաշնային միգրացիոն ծառայություն
ԵՏՄ	Եվրասիական տնտեսական միություն
ԶՊԾԳ	«Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության
ՀՆԱ	Համախառը ներքին արդյունք
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ԴՄԾ	Դաշնային միգրացիայի ծառայություն
ՄՊԾ	Միգրացիայի պետական ծառայություն
ՄՌԿ	Միգրացիոն ռեսուրս կենտրոն
ՌԴ	Ռուսաստանի Դաշնություն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԱԻՆ	Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ[1]

2013թ.-ի սկզբից ՌԴ-ն, որը հանդիսանում է ՀՀ-ից ամենաշատ միգրանտներ ընդունող երկիրը, նախաձեռնեց միգրացիոն քաղաքականության փոփոխություններ: Փոփոխությունները վերաբերում են հատկապես աշխատանքային միգրանտներին: Կարևոր է դրանքվերլուծել աշխտանքային միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության, ինչպես նաև Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիայի կանխարգելման տեսանկյունից: Խնդիրներ, որոնք կարևորվում են նաև ՀՀ միգրացիայի պետական հայեցակարգի տեսանկյունից: ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունների հետևանքների վերլուծությունը կարևոր է նաև այն առումով, որ այն կարող է էական ազդեցություն ունենալ ոչ միայն աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների վրա, այլ նաև Հայաստանի միգրացիոն իրավիճակի, ինչպես նաև տնտեսական զարգացումների վրա: Հաշվի առնելով Հայաստանից արտագնացության բարձր տեմպը և երկրի ՀՆԱ-ում Ռուսաստանից եկող դրամական փոխանցումների մեծ ծավալները՝ ցանկացած փոփոխություն կարող է էական ազդեցություն ունենալ երկրի տնտեսության, տնային տնտեսությանների մեծամասնության եկամուտների և այլ ոլորտների վրա:

Հաշվի առնելով հարցի կարևորությունը՝ սույն հետազոտությունը նախաձեռնվել է գնահատելու նոր իարվիճակը առկա միգրացիոն քաղաքականության տեսանկյունից, դրանց արձագանքելու գործընթացը, ինչպես նաև մշակելու քաղաքականության առաջարկներ, որոնք կարող են երկարաժամկետ հեռանկարում բարձրացնել ՌԴ մեկնող միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության մակարդակը, և Հայաստանից Ռուսաստան անկանոն միգրացիայի հաղթահարմանն ուղղված քաղաքակնության գործողությունների արդյունավետությունը:

Մեթոդաբանություն

Հետազոտության իրականացման համար կօգտագործվեն որակական հետազոտության մեթոդներ: Մասնավորապես՝ ա) գրասենյակային ուսումնասիրություն (Desk Research), բ) խորին հարցազրույցներ միգրանտների հետ, գ) փորձագիտական հարցումներ:

Գրասենյակային ուսումնասիրության ընթացքում ուսումնասիրվել են միգրացիոն քաղաքականությանն առնչվող փաստաթղթերը, առկա ուսումնասիրությունները, վիճակագրական տվյալներ և այլն: Ուսումնասիրվել են վերջին տարիներին տեղի ունեցած ՌԴ միգրացիոն քաղաքականության ազդեցիկ փոփոխությունները, ՀՀ

[1] Սույն հետազոտության շրջանակում դաշտային հետազոտության իրականացման հարցում մեծ ներդրում են ունեցել ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ասպիրանտ Արգամ Երանոսյանը և Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի մագիստրատուրայի ուսանողուհի Նունե Գրիգորյանը, ինչի համար իմ խորին երախտագիտությունն եմ հայտնում նրանց: Առանձնակի շնորհակալություն եմ հայտնում նաև ուսումնասիրության մեջ ներգրավված փորձագետներին, ովքեր սիրահոժար կիսվել են իրենց կարծիքով, փորձով և իրենց ունեցած տեղեկատվությամբ: Հատուկ շնորհակալություն եմ հայտնում նաև այն աշխատանքային միգրանտներին, ովքեր կիսվել են իրենց փորձով, առանց ինչի սույն հետազոտությունն ամբողջական չէր լինի:

միգրացիոն քաղաքականության արձագանքը դրանց, ՀՀ միգրացիոն պատկերի փոփոխությունը և դրա ազդեցությունը տնտեսության և այլ ոլորտների վրա:

Խորին հարցազրույց: 10 խորին հարցազրույց է իրականացվել ՌԴ մեկնող միգրանտների հետ: Մասնավորապես՝ աշխատանքային միգրացիայի փորձ ունեցող միգրանտների՝ այդ թվում նրանց հետ, ովքեր այս տարի չեն կարողացել մեկնել ՌԴ՝ արգելք ունենալու կամ միգրացիոն նոր քաղաքականության այլ պահանջների պատճառով: Խորին հարցումներն անց են կացվել Շիրակի մարզի միգրանտների շրջանում, քանի որ այնտեղ բավականին բարձր է միգրացիայի տեմպը:

Փորձագիտական հարցում: 8 փորձագիտական հարցում է անցկացվել ՀՀ միգրացիայի քաղաքականության մշակման և իրագործման ոլորտի ակտիվ դերակատարների՝ պետական կառույցների ներկայացուցիչների հետ: Որպես փորձագետներ հանդես են եկել թե՛ պետական և թե՛ հասարակական հատվածի ներկայացուցիչներ:

Վերլուծությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք վերջում ամփոփվում են քաղաքականությանն ուղղված առաջարկներով: Առաջին գլխում վերլուծվում են ՌԴ միգրացիոն քաղաքակնության վերջին փոփոխությունները: Երկրորդ գլուխում վերլուծվում են փոփոխությունների հետևանքները: Երրորդ գլխում գնահատվում է ՀՀ պետական միգրացիոն քաղաքականության արձագանքը ստեղծված նոր իրավիճակին և քաղաքականության գործողությունների արդյունավետության բարձրացման հնարավորությունները: Վերլուծությունն ավարտվում է քաղաքակնության առաջարկներով, որոնց միջոցով հնարավոր է երկարաժամկետ առումով ավելի բարձրացնել էմիգրանտների իրավնունքների և շահերի պաշտպանությունը, անկանոն միգրացիայի հաղթահարմանն ուղղված գործողությունների արդյունավետությունը:

1. ՌԴ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2012թ.-ից Ռուսաստանը մի շարք փոփոխություններ նախաձեռնեց իր միգրացիոն քաղաքականության մեջ: 2014թ. հունվարից ուժի մեջ մտան բավականին կտրուկ փոփոխություններ՝ անակնկալի բերելով ԱՊՀ տարածքից Ռուսաստան մեկնող միգրանտների ստվար բազմությանը: Հայտնի է, որ Հայաստանից էմիգրացիան բավականին ծավալուն է: Ուսումնասիրության համաձայն Հայաստանի տնային տնտեսությունների 36%-ը ներգրավված է միգրացիոն գործընթացներում[2]: Հայաստանի էմիգրացիոն հոսքերից ամենամեծը դեպի Ռուսաստան հոսքն է՝ ավելի քան 90%[3]: Ռուսաստանը գրավիչ է հատկապես սեզոնային աշխատանքային միգրանտների համար: Ընդհանուր առմամբ աշխատանքային միգրացիան կազմում է ընդհանուր միգրացիոն ելքային հոսքերի ավելի քան 85%-ը[4]: Էմիգրացիայի նման բարձր տեմպի արդյուքում դեպի Հայաստան դրամական փոխանցումները կազմում են պետության ՀՆԱ-ի 21%-ը[5], ընդ որում, ինչպես ցույց են տալիս ՀՀ կենտրոնական բանկի հրապարակած տվյալները, դրանց շուրջ 80%-ը Ռուսաստանից է:

Դեպի Ռուսաստան ծավալուն արտագնացության և Հայաստանի տնտեսության համար միգրանտների դրամական փոխանցումների նշանակալիության պայմաններում, կարևոր է հասկանալ, ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունների հնարավոր ազդեցությունը Հայաստանի՝ միգրացիայում ներգրավված տնտային տնտեսությունների, համայնքների և սոցիալական տարբեր իրողությունների վրա:

2014թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտան «ՌԴ մուտքի և ելքի մասին» և «ՌԴ-ում օտարերկրացիների կարգավիճակի մասին» օրենքներում կատարված փոփոխությունները[6]: Օրենքներով սահմանված ամենաազդեցիկ փոփոխությունն այն է, որ այսուհետ ՌԴ մուտք գործող միգրանտներն իրավունք ունեն ՌԴ-ում գտնվել ոչ ավել քան 90 օր 180 օրերի ընթացքում:

---

[2] Hakobyan, I. 2009. Remittances of Migrants; The Role of the Diaspora in Human Development in: National Human Development Report, Armenia. Yerevan: UNDP. Pp 103-128, p 110

[3] IOM 2014 *Report on Household Survey on Migration in Armenia*, Yerevan, p.69, Minasyan, Anna, Alina Poghosyan, Lilit Gevorgyan & Haykanush Chobanyan 2008. *Return Migration to Armenia in 2002-2008: A study*. Yerevan: Asoghik., p.12. Dulgaryan, Anush, George Welton, Aaron Erlich & Andrew Golda 2008. *Labor migration in Armenian Communities: a Community Survery*. Yerevan: Eurasia Partnership Foundation & Caucasus Research Resource Centers, p. 23.

[4] IOM 2011 Assessment Labour Market Potential in Armenia, Yerevan, p. 14, Minasyan, Anna, Alina Poghosyan, Lilit Gevorgyan & Haykanush Chobanyan 2008. *Return Migration to Armenia in 2002-2008: A study*. Yerevan: Asoghik., p.9

[5] WB, 2014, Personal remittances, received (% of GDP), http://data.worldbank.org/indicator/BX.TRF.PWKR.DT.GD.ZS

[6] http://www.fms.gov.ru/foreign_national/izmenzakon/

Այս օրենքը չի վերաբերում աշխատանքի նպատակով մեկնած և աշխատանքային իրավունք ունեցող միգրանտներին: Այնուամենայնիվ, հայտնի է, որ տարիներ շարունակ ՌԴ-ում իմիգրանտների աշխատանքը տնտեսության ստվերային հատվածում է եղել: Ուստի, ինչպես Ռուսաստանի այլ իմիգրանտեր, հայերը ևս այնտեղ գտնվել են գրանցումը փաստող փաստաթղթի հիման վրա, որը թարմացրել են յուրաքանչյուր երեք ամիսը մեկ՝ սահմանը հատելով և կրկին վերադառնալով կամ այլ անօրինական եղանակներով: Այս կերպ նրանք կարողացել են ամիսներ շարունակ օրինական գտնվել Ռուսաստանում, չունենելով սակայն աշխատանքի օրինական թույլտվություն: Վերոնշյալ օրենքներում կատարված փոփոխությունները, որոնք աշխատանքի թույլտվություն չունեցող անձին հնարավորություն չեն տալիս 3 ամսից երկար գտնվել Ռուսաստանում, էականորեն բարդացնում են մինչ այժմ տարածված միգրացիոն պրակտիկաները: Հայտնի է, որ Հայաստանում աշխատանքային միգրացիան ունի սեզոնային բնույթ, և միգրանտները Ռուսաստանում փաստացի անց են կացնում մոտ 8 ամիս[7]: Ուստի, 3 ամիս աշխատելուց հետ 3 ամսով Հայաստան վերադառնալու պարտադրանքը էական սահմանափակում է բավարար դրամական միջոցներ կուտակելու և ՀՀ փոխանցելու/բերելու համար:

Ինչպես ցույց են տալիս դաշտային հետազոտության արդյունքները, այս օրենքը աշխտանքային միգրանտների մեկնման և ժամանման ավանդական ժամանակացույցում մեծ փոփոխություններ չի առաջացրել: Աշխատանքային միգրանտների մեծ թիվ ունեցող որոշ գյուղական համայնքներում համայնքի ղեկավարների հետ զրույցները ցույց են տալիս, որ նոր կարգի սահամանումից հետո իրենց համայնքում գրեթե չեն եղել աշխատանքային միգրանտներ, ովքեր մեկնելուց 3 ամիս անց վերադարձել են: Սա նշանակում է, որ աշխատանքային միգրանտները, կամ հնար են գտնում շրջանցելու ՌԴ կողմից սահմանված կարգը, կամ աշխատանքի թույլտվություն են ձեռք բերում: Դաշտային նյութը ցույց է տալիս, որ օրինական կարգի շրջանցմամբ աշխատանքային թույտվություն ստանալու պրակտիկաները ևս բավականին տարածված են: Դրանք հիմնականում արվում են միջնորդների օգնությամբ: Աշխատանքային միգրանտներից մեկը պատմում է հետևյալը.

> *«Աշխատանքի թույլտվությունը մոտ 25000 ռուբլի է, որ տալիս վերցնում ես միանգամից, իսկ պատենտը կարող ես ամսեկան մուծել, մի ամիսը 1200 ռուբլի է գալիս: Սկզբից մի քանի վճարներ ես տալիս, մոտ 2000 ռուբլի: Բայց թանկ է նստում, էնտեղ մեծ հերթեր կան, դրանք էլ շրջանցելու համար էնտեղի ժուլիկներին մի 1500 ռուբլի տալիս ես, որ արագ գործերդ դզեն: Էնտեղ տարբեր ազգեր են էդ գործը անում, հայերն անում են հայերի համար, ադրբեջանցիները իրենց համար, ուզբեկներն էլ ուզբեկների համար: Բայց քանի որ էնտեղ էլ փող տվողները շատ են, էլի հերթի մեջ ես կանգնում, դե մոտ երկու ժամ, իսկ եթե օրինական հերթի մեջ կանգնես մի երկու օր պետք է սպասես»:*

[7] Minasyan, Anna, Alina Poghosyan, Tereza Hakobyan & Blanka Hanchilova 2007. *Labor Migration from Armenia in 2005-2007: A survey*. Yerevan: Asoghik, p.28.

2015թ. հունվարի 2-ից ուժի մեջ մտած կարգի համաձայն՝ այս հարցն օրինական տեսանկյունիցկարծես ավելի է հեշտացվել: ԵՏՄ միության անդամ պետություններում՝ Բելոռուսում, Ղազախստանում և Ռուսաստանում աշխատելու համար ՀՀ քաղաքացիներից չի պահանջվում ունենալ աշխատանքի թույլտվություն ընձեռող որևէ փաստաթուղթ՝ լինի դա աշախտանքի թույլտվություն, թե՝ պատենտ: ԵՏՄ անդամ պետություններում օրինական աշխատելու և գտնվելու համար անհրաժեշտ է միայն կազմակերպության կամ ֆիզիկական անձի հետ կնքված աշխատանքային կամ քաղաքացիա-իրավական պայմանագիր: Բացի այդ, ԵՏՄ անդամ պետություն մուտք գործելու օրվանից 30 օր ՀՀ քաղաքացի աշխատանքային միգրանտը և նրա ընտանիքի անդամներն ազատվում են պետությունների լիազոր մարմիններում գրանցվելուց[8]:

Ինչպես վկայում է դաշտային նյութը, մինչ այժմ աշխատանքային պայամանգրով աշխատելը ևս տարածված փորձառություն չէ: Թե՛ գործատուն և թե՛ միգրանտը որոշակի առավելություններ են տեսնում առանց պայամանգրի աշխատանքի մեջ: Գործատուի տեսանկյունից դա նվազեցնում է աշխատուժի ինքնարժեքը: Աշխատանքային միգրանտը, իր հերթին, պնդում է, որ առանց պայմանագրի ավելի ճկուն կարող է լինել և ավելի շատ գումար վաստակել: Գործատուի կողմից շահագործված և խաբված լինելու ռիսկը նրանք բավականին ցածր են գնահատում՝ պնդելով, որ ծանոթ մարդկանց հետ են աշխատում, ում կարող են վստահել: Այս առումով կարևոր է նաև երևույթի մարդաբանական և մշակութային կողմը: Աշխատանքային միգրանտները գիտեն դեպքեր, երբ միգրանտը խաբվում է գործատուի կողմից: Բայց սա կարծես համարվում է աշխատանքային միգրանտի առօրեականության հնարավոր սցենար, որը սովորական է թվում մարդկանց: Դա մոտավորապես գնահատվում է «ո՞ւմ հետ չի պատահում» բանաձևով, որը երևույթին բանալություն է հաղորդում: Ուստի աշխատանքային միգրանտներին սա ավելի սովորական պրակտիկա է թվում, քան, աշխատանքային պայմանագրով ամրագրված աշխատանք գտնելը, աշխատանքային պայմանագիր կնքելը: Այս դիրքորոշումն իր խոչընդոտներն է ստեղծում օրինական դաշտում աշխատանքային պայմանագրով աշխատանքի համար:
Աշխատանքային միգրանտներից մեկը նշում է.

> *«Էստեղից շատ քիչ մարդ կա, որ Ռուսաստանում պայմանագրով կաշխտեն: Խոպանում աշխատելու լավն էլ էտ է էլի, որ ոչ մեկին հարկ չես տա, դու քու գլխի տերն ես: Փոթռատչիկներն էլ դե մեր իմացած մարդիկ են, պատահական մարդկանց հետ չենք ելնի գնա խոպան: Որ պայմանագրային աշխատող չես էղնի, առաջին ձեռքից գործը կենես ու սաղ փողը քեզ կուդան»:*
>
> *Աշխատանքային միգրանտ, Արթիկ*

Փաստորեն ՌԴ օրենքի փոփոխություններն օրինական դաշտում, ըստ էության, ավելի են հեշտացնում աշխատանքային միգրանտների կեցությունն ու օրինական աշխատանքը Ռուսաստանում: Բայց դրանք պահանջում են գործողություններ, որոնց պրակտիկաները

[8] http://smsmta.am/?show_news&news_id=382

բացակայում են: Հեշտացվել է միգրանտների կեցության և աշխատանքի փաստաթղթավումն ու կարգավորումն օրինական դաշտում, սակայն տասնյակ տարիներ այս հարցերը կարգավորվել են ոչ թե օրենքի, այլ դրանից դուրս գտնվող հարթություններում՝ ոչ ֆորմալ պրակտիկաների միջոցով, որոնք փոխշահավետ են եղել դրանցում ներգրավված բոլոր կողմերի համար. գործանուտերի, ովքեր խուսափել են պայմանագիր կնքելուց՝ հարկերը չվճարելու և միգրանտների աշխատուժի ինքնարժեքը կրճատելու նպատակով, միգրանտների համար, ովքեր պետք է դիմակայեն Ռուսաստանի աշխատաշուկայում էժան աշխատուժի մեծածավալ առաջարկին և հնարավորինս քիչ ժամանակ ու ջանք ծախսեն բյուրոկրատական գործընթացների վրա, միջնորդների համար, ովքեր կեղծ փաստաթղթեր ապահովելու կամ բյուրոկրատական գործընթացներն արագացնելու անօրինական ծառայություն են մատուցում, միգրանտներին առնչվող լիազոր մարմինների կոռումպացված ներկայացուցիչների և այլ կողմերի համար: Ահա այս պայմաններում, երբ անօրինական դաշտում գործելու առավելությունները հաղթահարված չեն և այդ դաշտում գործելու հնարավորությունները նվազեցված չեն, դեռևս պետք է հետևել, թե զուտ օրենքի փոփոխությունն ինչքանով է նպաստում նոր պրակտիկաների ձևավորմանը:

Հայաստանից Ռուսաստան մեկնող միգրանտներին առնչվող մյուս կարևոր փոփոխությունն այն է, որ 2013թ. վերջից ՌԴ-ն սկսեց արագորեն համալրել ՌԴ մուտքի արգելք ունեցող անձանց ցանկը՝ այսպես կոչված «սև ցուցակը»: Միգրացիայի պետական ծառայության ներկայացուցիչների կողմից ՀՀ ՏԿԱԻՆ ներկայացրած տվյալների այս ցանկը ներառում է շուրջ 170 000 ՀՀ քաղաքացի, ում համար ՌԴ մուտքն արգելափակված է 6 ամսից 3 տարով: Ըստ փորձագիտական գնահատականների 170000-ից շուրջ 37000-ն արդեն գտնվում են Հայաստանում, մինչդեռ մնացած 133000 քաղաքացիները դեռևս գտնվում են ՌԴ տարածքում, սակայն Հայաստան վերադառնալու պարագայում նրանց վրա ևս կտարածվի ՌԴ մուտքի արգելքը: Արգելքի պատճառ են հանդիսանում ոչ միայն ՌԴ միգրացիոն կարգի, այլ նաև վարչական խախտումները:

2013թ. վերջին՝ երբ ՌԴ կողմից ընդունված արգելքները սկսեցին խստորեն գործել, բազմաթիվ ՀՀ քաղաքացիներ հայտնվեցին ծանր կացության մեջ: Դա պայմանավորված էր հատկապես այն հանգամանքով, որ նրանց ոչ մի եղանակով չէր տեղեկացվել արգելքի մասին:

Տեղյակ չլինելով, բազմաթիվ մարդիկ մեկնել էին ՌԴ, սակայն ՌԴ սահմանին էին միայն պարզել, որ իրենց մուտքն արգելված է: Սա շատ ընտանիքների բավականին ֆինանսական և հոգեբանական կորուստներ պատճառեց: Շատ ավելի ուշ՝ 2014թ. Հունվարին, ՌԴ միգրացիոն պետական ծառայությունն իր կայքում տեղադրեց տվյալների բազա, որտեղ կարելի էր փնտրել և պարզել՝արդյոք անձը ներառված է մուտքի արգելք ունեցող անձանց ցանկում, թե ոչ: Ուսումնասիրության ընթացքում ձեռքբերված տվյալները ցույց են տալիս, որ «սև ցուցակում» գտնվող միգրատների թիվը բավականին մեծ է: Օրինակ՝ Արարատի միգրացիոն ռեսուրս կենտրոն (ՄՌԿ) այս հարցով դիմածներից «սև ցուցակում» իրենց անունը գտել են դիմողների 41%-ը, Սյունիքի ՄՌԿ՝ 35%-ը, Արմավիրի ՄՌԿ՝ 26%-ը, և Վայոց Ձորի ՄՌԿ՝ 17%-ը:

ՌԴ միգրացիոն պետական ծառայության կայքում տվյալների բազայի տեղադրումը, այնուամենայնիվ, վերջնականապես չվերացրեց անորոշությունը և ՀՀ քաղաքացիների չտեղեկացվածությունն իրենց կարգավիճակի վերաբերյալ, քանի որ տվյալների բազան ունի մի շարք բացեր:

Այն տեղեկատվություն է պարունակում միայն այն անձանց վերաբերյալ, ում արգելքը սահմանված է ՌԴ Միգրացիոն դաշնային ծառայության (ՄԴԾ) կողմից: Մինչդեռ, մուտքի արգելքը կարող է դրված լինել ՌԴ այլ գերատեսչությունների կողմից ևս: Արգելքը դրվում է այն գերատեսչության կողմից, որի իրավասության ներքո գտնվող կարգը քաղաքացին խախտել է: Այն կարող է դրվել ոչ միայն միգրացիոն կարգ խախտելու դեպքում, այլ նաև երթևեկության կանոնների խախտման, կոմունալ վճարները չվճարելու կամ այլ խախտումների համար:

> *«Օրական մոտ 30 քաղաքացի դիմում է մեզ այս խնդրով: Քաղաքացին դիմում է մեզ հստակ իմանալու՝ արդյոք իր նկատմամբ արգելք կիրառվել է, թե ոչ, և մենք ոչ մի հստակ ինֆորմացիա չունենք քաղաքացու հարցին պատասխանելու»:*

Արարատի ՄՌԿ տնօրեն

Ներկայումս ՌԴ ՄԴԾ կայքում արգելքի պատճառի և տևողության վերաբերյալ էլեկտրոնային հարցում ուղղելու հնարավորություն կա: Այնուամենայնիվ ոլորտի աշխատակիցների հավաստմամբ այդ հնարավորությունը ևս չի ավելացնում որոշակիությունը և քաղաքացիների տեղեկացվածությունը: Հայցը բավականին ուշ է արձագանք ստանում (կայքում նշված է, որ հայցերին պատասխանելու ժամկետը 30 օր է, սակայն որպես կանոն պատասխաններն էլ ավելի ուշ են գալիս): Քիչ չեն նաև անպատասխան հայցերի դեպքերը: Այն դեպքերում, երբ պատասխանն այնուամենայնիվ գալիս է, այն տեղեկատվություն չի պարունակում, պարզապես նշվում է, որ տվյալները քիչ են, որպեսզի որևէ տեղեկատվություն տրվի:

> *«Քաղաքացիների մոտ անորոշ է նաև, թե ինչքան ժամանակով է իրենց նկատմամբ արգելք կիրառված. նրանցից մոտ 80 տոկոսն այս մասին որևէ տեղեկություն չունի, իսկ կայքը այդպիսի հնարավորություն չի տալիս»:*

Արմավիրի ՄՌԿ տնօրեն

Միգրացիայի որոլտի աշխատակիցները նշում են նաև դեպքեր, երբ որոշակի օրենք խախտած անձիք արգելք չեն ունեցել: Ինչը ևս մեկ անգամ ցույց է տալիս այս հարցում առկա անհստակությունները և կարգավորման բացերը: Քիչ չեն նաև դեպքերը, երբ միգրանտներին հաջողվում է ինչ-որ կերպ շրջանցել օրենքը:

> *«Կան մարդիկ, ովքեր մեզ պատմել են, որ իրենց հաջողվել է փոխել անձնագրերը, կամ փոխել անվան մեջ տառեր և այդ կերպ դուրս գալ երկրից: Եղել է նաև դեպք, երբ քաղաքացին պայմանավորվել է սահմանի աշխատակցի հետ և որոշակի գումարով (6000-10.000 ռուբլի) անցել է սահմանը: Այսինքն վարորդը, ով իրենց տանում է, ասում է, որ կարող է անցկացնել և պայմանավորվածություն ունենալով սահմանի աշխատակցի հետ՝ քաղաքացուն թույլ են տալիս անցնել սահմանը: Կամ, եղել է նաև այնպիսի դեպք, երբ հարսի նկատմամբ արգելք է կիրառվել և որոշակի*

ժամանակ անց սկեսրայը եկել է և ասել, որ հարսին ճանապարհեցին Ռուսաստան: Այսինքն այս պատմությունները վկայում են, որ քաղաքացիները ելքեր գտնում են արգելքը շրջանցելու»:

Արարատի ՄՌԿ տնօրեն

Օրենսդրական դաշտում փոփոխությունների հաջողության տեսանկյունից խիստ կարևոր է մշակութային դաշտը և այն փորձառությունը, որն անհատներն ունեցել են մինչ փոփոխությունը: Քանի որ ցանկացած նոր գործողություն կյանքի է կոչվում մինչ այդ եղած փորձի հիման վրա: Այն հարցերը, որոնց կարգավորման ոչ ֆորմալ պրակտիկաները շատ խորն են արմատացած միգրանտների փորձառության մեջ, մեծ ջանք են պահանջում օրենքի դաշտում կարգավորվելու համար: Ռուսաստանում միգրանտների կեցության և աշխատանքի հետ կապված կարգավորման անօրինական փորձառություններն այնքան սովորական են և տարածված, որ հաճախ մարդիկ նույնիսկ չեն գիտակցում դրանց անօրինական և անթույլատերի լինելը:

«Ռուսաստան եղել եմ երեք տարի, գնացել եկել եմ: Վերջին տարին որ գնացի, գրանցումն արեցինք, վերջում պարզվեց պատենտն ու ռեգիստրացիան կեղծ էին արել, բայց մենք օրինական տեղ էինք տարել: Ուղղակի փող էինք տվել, որ արագ անեն: Իրենք ինձ չեք տվեցին: Հետո տարան ոստիկանություն, գործերս տվեցին դատարան, որոշվեցին 5.000 ռուբլի տուգանել: Տուգանքը մուծեցի, ասեցին ամեն ինչ նորմալ է, կարող եք ազատ աշխատել, ոչ մի խնդիր չկա: Դրանից հետո 10-15 օր աշխատեցի ու եկա Հայաստան: Հետո կայքով նայեցի՝ փակ էր:»

ՌԴ մուտքի արգելք ունեցող նախկին աշխատանքային միգրանտ

2. ՌԴ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԻՍ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Որպեսզի գնահատենք 2013-2014թթ ընթացքում իրականացված ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունների ազդեցությունը ՀՀ էմիգրացիոն հոսքերի վրա, դիտարկենք երկու ցուցանիշ՝ ՀՀ-ից մեկնումների և ժամանումների տարբերության և դրամական փոխանցումների ծավալների փոփոխությունը:

ՀՀ ՏԿԱԻՆ միգրացիոն պետական ծառայության տարածած տվյալների համաձայն Հայաստանում գտնվող և Ռուսաստան մեկնելու արգելք ունեցող անձանց թիվը 37000 է: Այս թիվն ավելի մեծ է, քան տարեկան Հայաստանից մեկնումների թիվը, որը տնային տնտեսությունների հարցումների արդյունքում ստացված տվյալների հիման վրա գնահատվել է շուրջ 35000 մարդ[9]: Այս թվերը հուշում են, որ արգելքը պետք է որ էականորեն տեսանելի փոխի թե՛ էմիգրաիցոն հոսքերի և թե՛ Ռուսաստանից դրամական փոխանցումների ծավալը:

«Սև ցուցակների» համալրման ազդեցությունը սկսվեց 2013թ հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներից, որոնք աշխատանքային միգրանտների վերադարձի հիմնական ամիսներ էին: Ուստի արգելքը աշխատանքային միգրանտների մեկնումների վրա պետք է տեսանելի դառնար 2014թ-ից:

ՀՀ սահմանահատումների տվյալներն, այնուամենայնիվ 2014թ. էմիգրացիոն հոսքերում կրճատում ցույց չեն տալիս (տես Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. ՀՀ ից մեկնումների և ժամանումների թվերը 2010-2014թթ*

	Ժամանում	Մեկնում	Սալդո
2010	1754200	1800900	-37941**
2011	1945100	1988900	-43481**
2012	2191800	2234600	-44809**
2013	2476300	2507500	-31200
2014	2734600	2776300	-41700

* *Աղբյուրը՝ ՄՊԾ հրապարակած տվյալներ http://www.smsmta.am/?menu_id=18*

Սահմանահատումների տվյալները, ինչպես հայտնի է, չեն ներկայացնում էմիգրացիայի հստակ պատկերը: Առավել ևս, դրանք չեն պարունակում առանձին տվյալներ դեպի Ռուսաստան սեզոնային աշխատանքային միգրացիայի մասին: Ուստի այս տվյալների հիման վրա կարելի է պարզապես մոտարկումներ և ենթադրություններ անել: Ինչպես երևում է Աղյուսակ 1-ում ներկայացված 2010-2014թթ դինամիկայից, 2014 թ-ին մեկնումների թվի կրճատում չի գրանցվել:

---

9 IOM, 2014, Report on Household Survey on Migration in Armenia, p. 63

** 2010-2012 թթ նշված սալդոն չի համապատասխանում նույն թվականներևի համար նշված ժամանումների և մեկնումների տարբերությանը, քանի որ սալդոն լրացուցիչ ճշգրտվել է ԱԱԾ կողմից:

Դեպի Ռուսաստան աշխատանքային միգրացիայի հնարավորկրճատումը հուշող մեկ այլ ցուցանիշ է Ռուսաստանից ստացվող դրամական փոխանցումների ծավալը: Այս ցուցանիշի հիման վրա ևս դժվար է միանշանակ հետևություններ անել էմիգրացիոն հոսքերի վերաբերյալ,քանի որ Ռուսաստանից դրամական փոխանցումները կատարվում են ոչ միայն աշխատանքային միգրանտների այլ նաև այնտեղ հաստատված քաղաքացիների կողմից: Այնուամենայնիվ, հաշվի առնելով արգելք ունեցող անձանց թվի մեծությունը կարելի է պնդել, որ այն չի կարող չարտահայտվել նաև դրամական փոխանցումների ցուցանիշներում: Սակայն այն ևս ցույց է տալիս, որ Ռուսական ռուբլու ծավալի առումով անկում չի եղել: Ինչը հուշում է, որ դեպի ՌԴ էմիգրացիոն հոսքը, եթե նույնիսկ ինչ-որ չափով կրճատվել է, կրճառումը զգալի ծավալներ չունի:

Այս հարցում հաշվարկը փոքր-ինչ ավելի խրթին է: Վերլուծության համար հիմք հանդիսացող տվյալները վերցված են ՀՀ ԿԲ հրապարակումներից, որտեղ դրամական փոխանցումները տրված են ԱՄՆ դոլարով: Ինչպես ցույց է տված Գծապատկեր 1-ում ՌԴ-ից կատարված դրամական փոխանցումների ծավալները՝ ԱՄՆ դոլարով արտահայտված, 2014թ. ընթացքում կրճատվել են: Սակայն ռուբլով արտահայտված՝ այն աճել է՝ պահպանելով նախորդ տարիների միտումը: Ուստի դոլարով արտահայտված ծավալների անկումը պայմանավորված է դոլարի համեմատ ռուբլու արժեզրկմամբ և ոչ թե էմիգրանտների թվի կրճատմամբ:

Գծապատկեր 1. ՌԴ-ից դրամական խոխանցումների դինամիկան 2010-2014 թթ.[10]



2014թ.-ին, ի համեմատ 2013թ.-ի, դոլարով արտահայտված դրամական փոխանցումները Ռուսաստանից Հայաստան նվազել են 10%-ով: Սակայն, ռուբլով արտահայտված, դրանց աճը կազմում է 8.8%: Ինչպես ցույց է տրված Աղյուսակ 2-ում, 2014թ-ին դոլարը նախորդ տարվա համեմատ թանկացել է 23%-ով, ինչը գրեթե 7 անգամ գերազանգում է 2013թ.-ի թանկացումը: Ուստի, դոլարով արտահայտված ծավալների անկումը պայմանավորված է դոլարի համեմատ ռուբլու արժեզրկմամբ և ոչ թե էմիգրանտների թվի կրճատմամբ:

[10] Աղբյուրը՝ տե՛ս Աղյուսակ 2.

Աղյուսակ 2. ՌԴ-ից դրամական փոխանցումները 2010-2013 թթ.

	ԱՄՆ դոլար[11]	Աճը նախորդ տարվա համեմատ (% $)	Ռուբլի[12]	Աճը նախորդ տարվա համեմատ (% Ռուբլի)	Տարվա միջին փոխարժեքը[13]	Աճը նախորդա տարվա համեմատ (%)
2014	1,554,852	-10.0	60,595,059	+8.8	39.3	+23.0
2013	1,727,945	+5.1	55,670,071	+8.6	31.98	+3.3
2012	1,643,995	+20	51,256,547	+27.2	30.97	+5.4
2011	1,364,892	+23	40,277,556	+18.6	29.38	-3.2
2010	1,114,114	+17	33,947,094	+13.6	30.38	-4.8

Այսպիսով, հասանելի ցուցանիշների գնահատման հիման վրա, կարելի է եզրակացնել, որ 2013-2014թթ. ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունները և մասնավորապես ՌԴ մուտքի արգելքի լայնածավալությունը գրեթե չի անդրադարձել միգրացիոն հոսքերի վրա:

Դաշտային նյութը ևս ցույց է տալիս, որ 2014 թ. փոփոխություններն էական ազդեցություն չեն թողել էմիգրացիոն հոսքերի վրա:

2014 թ. սեպտեմբերին Լոռու մարզում իրականացված հետազոտության շրջանակում ընդգրկված 18 համայնքների շարքում միայն մեկ համայնքում՝ Ջրաշենում է գրանցվել արգելքի զգալի ազդեցությունը[14]: ՏԻՄ ներկայացուցչի խոսքերի համաձայն համայնքում մոտ 80-100 աշխատանքային միգրանտներ ստիպված են եղել մնալ գյուղում՝ «սև ցուցակում» ընդգրկված լինելու պատճառով: Ինչպես նշված է վերլուծության մեջ. «Մնացած գյուղերի՝ «սև ցուցակում» ընդգրկված աշխատանքային միգրանտների մեծամասնությունը կարողացել են արգելքը շրջանցելու ուղիներ գտնել: Նրանց մեծ մասը փոխել են ազգանունները: Այսպիսով, ՌԴ քաղաքականության խստացումը զգալի ազդեցություն չի ունեցել ուսումնասիրված համայնքների վրա: Ինչևէ, այն տնային տնտեսությունները, որոնց միգրանտները չեն կարողացել մեկնել Ռուսաստան, ստիպված

[11] Աղբյուր՝ հեղինակի հաշվարկ, հիմնված ՀՀ ԿԲ հրապարակած տվյալների վրա., ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված դրամական փոխանցումները (ամսական), https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx

[12] Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկ, հիմնված ՀՀ ԿԲ հրապարակած ամսական դրամական փոխանցումների (https://www.cba.am/am/SitePages/statexternalsector.aspx) և ՌԴ ԿԲ հրապարակած՝ ԱՄՆ դոլարի ամսական միջին արժեքի վրա (http://www.cbr.ru/statistics/print.aspx?file=credit_statistics/ex_rate_ind_14.htm&pid=svs&sid=analit):

[13] Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկ, հիմնված ՌԴ ԿԲ հրապարակած տվյալների վրա http://www.cbr.ru/statistics/print.aspx?file=credit_statistics/ex_rate_ind_14.htm&pid=svs&sid=analit

[14] Պողոսյան Ա., Պողոսյան Մ., Երանոսյան Մ. 2015, «Աշխատանքի շուկայի առանձնահատկությունները և միգրացիան Լոռու մարզում զարգացման հնարավորությունների տեսանկյունից»

են պայքարել տնային տնտեսության եկամտի հիմնական աղբյուրի կորստով պայմանավորված դժվարությունների դեմ: Այս ընտանիքները բախվել են մի շարք դժվարությունների. ապրուստ վաստակելու, վարկերը մարելու, որոնք վերցվել են՝ ստացվող դրամական փոխանցումների ակնկալիքով և այլ դժվարություններ»:[15]

Այսպիսով, մի կողմից ՌԴ մուտքի արգելք ունեցող անձանց մեծ թիվը հուշում է, որ արգելքի պատճառով մեկնել չկարողացողների հաշվին մեկնումների թիվը պետք է էականորեն կրճատվեր: Մյուս կողմից տարբեր ցուցանիշներ և կարծիքներ ցույց են տալիս, որ արտագնացության զգալի կրճատում տեղի չի ունեցել:

Սա թույլ է տալիս ենթադրել, որ արգելք ունեցող անձիք այն շրջանցելու որոշակի եղանակներ են գտել: Ըստ ՄՊԾ հրապարակած տվյալների շուրջ 4000 հոգու դեպքում արգելքը հանվել է ՌԴ ՄԴԾ կողմից: Սակայն արգելքը հաղթահարողների թիվն ավելի մեծ է:

Թե՛ միգրանտները և թե՛ ոլորտի աշխատողները նշում են, որ իրենց հայտնի են դեպքեր, երբ արգելք ունեցող անձանց այնուամենայնիվ հաջողվել է մեկնել ՌԴ: Արգելքը հաղթահարելու ամենատարածված ձևն ազգանունը փոխելն է: Այս մասին են վկայում, թե՛ միգրացիայի ոլորտի աշխատակիցները, թե՛ արտագնացության ակտիվ ցուցանիշներ ունեցող համայնքների ղեկավարները և թե՛ միգրանտներն իրենք[16]:

> *«Սահմանափակումը շրջանցելու միակ ձևը ազգանունը փոխելն է: Սովորաբար կնոջ ազգանուն են վերցնում: Դրա դեմն էլ են առել, նախկինում միայն բութ մատի մատնահետքն էին վերցնում: Սև ցուցակում հայտնվածները բութ մատը վառում էին, որ մատնահետքերը չերևան: Հիմա արդեն ամբողջ ձեռքն են նկարում ու ոչ մի բան չես կարողանում անել»:*
>
> *ՌԴ մեկնելու սահմանափակում ունեցող աշխատանքային միգրանտ*

Այստեղ կարևոր է նշել, որ, թեև առայժմ ՌԴ միգրացիոն քաղաքականության փոփոխությունները մասշտաբային ազդեցություն չեն ունեցել ՀՀ տնտեսական և այլ գործընթացների վրա, այնուամենայնիվ, առանձին տնային տնտեսությունների մակարդակում փոփոխություններն ունեցել են իրենց զգալի հետևանքները:

Աշխատանքային միգրանտների հետ աշխատող փորձագետների պնդմամբ՝ այն ընտանիքները, որոնք չեն կարողացել հաղթահարել արգելքը, բավականին մեծ դժվարությունների են բախվել:

> *«Մարդիկ ծայրահեղ ծանր իրավիճակում են գտնվում՝ ունենալով բազմաթիվ վարկեր: Ես դեպքեր եմ հիշում, երբ ստուգել ենք արգելքը, քաղաքացուն ասել, որ*

---

[15] Նույն տեղում, էջ 35

[16] Ազգանունը փոխելու միջոցով արգելքը շրջանցելու դեպքերի մասին կարելի էր ավելի ճշգրիտ կարծիք կազմել, եթե լինեին վերջին տարիներին անվանափոխությունների քանակական տվյալները: Այս կապակցությամբ մենք հարցում ենք արել ՀՀ Արդարադատության նախարարության քաղաքացիական կացության ակտերի գրանցման վարչություն, որտեղից, ցավոք սրտի, ստացել ենք միայն 2007-2013 թթ. տվյալները: 2014 թ. տվյալները չեն տրամադրվել, պատճառաբանելով, որ դրանք դեռևս հաշվարկված չեն:

սև ցուցակում է գտնվում, և նա վատացել է, աշխատակիցներն են օգնության հասել: Այսինքն Ռուսաստան աշխատանքի մեկնելը հաճախ քաղաքացիների միակ հույսն է և իրենց անելանելի իրավիճակի մեջ է դնում»:

Վայոց Ձորի ՄՌԿ տնօրեն

Նույնիսկ նրանք, ում հաջողվել է աշխատանք գտնել, այնուամենայնիվ դա բարձր չեն գնահատում, քանի որ կարծում են, որ ՌԴ-ում անհամեմատ ավելի շատ էին վաստակում:

«Էս ընթացքում Ղարաբաղում զբաղվել եմ շինարարությամբ: Դե աշխատանքն անհամեմատելի է, ծայրահեղությունից ծայրահեղություն, հազիվ կարողանում ենք ապրել: Եթե խոպանում մոտ 1000 դոլար աշխատում ենք միջինը, էստեղ 100-120 հազար դրամ է: Ժամանակ ա լինում, որ սիգարետի փող չենք ունենում»:

ՌԴ մեկնելու սահմանափակում ունեցող աշխատանքային միգրանտ

Շատերի համար արտագնա աշխատանքից ստացվող գումարը եկամուտի հիմնական աղբյուրն է: Տարբեր հետազոտություններ ցույց են տալիս, որ Հայաստանում՝ հատկապես գյուղական համայնքներում, կանխիկ գումարի սակավության պայմաններում շատ տնային տնտեսություններ մշտապես վարկեր ունեն: Հետազոտությունները ցույց են տալիս, որ «միջինում համայնքների տնային տնտեսությունների 70%-ն ունի վարկեր: Համայնքների ղեկավարները և գյուղացիները նշում են, որ վարկային կազմակերպությունները համայնքի անդամների մոտ վարկեր վերցնելու սովորույթ են ձևավորել, ինչը հանգեցրել է ոչ ռացիոնալ կերպով վարկ վերցնելու պրակտիկաների»:[17] Արտագնացության մեջ ներգրավված ընտանիքները հիմնականում այդ վարկերը մարում են դրամական փոխանցումներից: Շատերի համար հատկապես մտահոգիչ է եղել վարկերը մարելու դժվարությունը:

«Ժամանակ ա լինում, որ սիգարետի փող չենք ունենում: Բանկում փող ունեմ պարտք: Ես ում ճանաչում եմ էդ ձև խնդիրների մեջ են: Մարդիկ կան, ոսկի էլ ունեն բանկում, միաժամանակ վարկ էլ ունեն ու լիքը պարտքեր»:

ՌԴ մեկնելու սահմանափակում ունեցող աշխատանքային միգրանտ

ՌԴ մուտքի արգելքի հետևանքով առաջացած բարդ իրավիճակը, թվում է, պետք է ակնհայտորեն ցուցադրեր միգրացիոն և այլ օրենքների խախտման բացասական հետևանքները, ի ցույց դներ օրինական գործելու առավելությունները և անօրինականի ռիսկերը: Այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս ուսումնասիրության արդյունքներն այդ իրավիճակը առիթ չի եղել, որպեսզի մարդիկ վերագնահատեն օրենքի լայնածավալ խախտման փորձառությունը:

Շատերը տպավորություն ունեն, որ իրենց նկատմամբ անարդար են վարվել: Շատերը նույնիսկ վստահ են, որ իրենք խախտում չեն արել և իրենց նկատմամբ արգելքն անտեղի է կիրառվել: Սա պայմանավորված է նրանով, որ տասնյակ տարիներ Ռուսաստանում

[17] Պողոսյան Ա., Պողոսյան Մ., Երանոսյան Մ. 2015, «Աշխատանքի շուկայի առանձնահատուկությունները և միգրացիան Լոռու մարզում զարգացման հնարավորությունների տեսանկյունից», էջ 27-28

կեցությունը և աշխատանքը եղել է օրենքի շրջանցմամբ: Փաստաթղթերի կեղծումը, տարբեր գերատեսչություններում կաշառքը, միջնորդների անօրինական ծառայություն-ների տարածվածությունն այնքան օրինաչափ են համարվում միգրանտների շրջանում, որ շատերը նույնիսկ չեն տարբերում, թե որ քայլն է օրինական և որը՝ ոչ:

«Ես առաջին անգամ 2010 թ.-ին եմ Ռուսաստան գնացել. լրիվ օրինական կերպով: Օրենքներից տեղեկություն ունեցել եմ, առավել ևս ՖՄՏ-ի [Федеральная Миграционная Служба РФ- Ա.Պ.]: Թղթերիս հետ կապված որևէ խնդիր չեմ ունեցել: Նույն թվականին մնացել եմ երկու ամիս, հաջորդ անգամ երեք ամիս գրանցվեցի: Իմ միակ խախտումն էն էր, որ որտեղ աշխատում էի, էնտեղ չէի գրանցվել: Նախկինում տերմինալներ կային օդանավակայաններում, տուգանքներ էին մուծում: Բայց քանի որ էտ օրենքի փոփոխություն էղավ 2014-ին, ես տեղեկություն չեմ ունեցել ու հայտնվեցի սև ցուցակում»:

ՌԴ մեկնելու սահմանափակում ունեցող աշխատանքային միգրանտ

«Պատահական մարդկանց վրա էինք գրանցվում, 500-1000 ռուբլի էինք տալիս: Ամեն երեք ամիսը մեկ պետք է տան տիրոջ հետ գնաս վերաթարմացնես: էտ բարդություններ էր առաջացնում, որովհետև ռուսները իրենց տան վրա փողով էին գրանցում, ամեն գրանցումը մոտ 500 ռուբլի էինք վճարում: Այսինքն պետք է ամեն երեք ամիսը մեկ ռուսներին փող տայինք, որ հետներս գային գրանցումը թարմացնեին: էտ էլ մի ուրիշ դժվարություն էր: Մյուս ձևն էլ էն էր, որ եթե շատ ես մնացած լինում, որպեսզի սև ցուցակում չհայտնվես, անձնագիրդ ճղում ես, հետո Հայաստանի դեսպանատունը վերադարձի թուղթ է տալիս, մի կերպ գալիս ես տուն»:

ՌԴ մեկնելու սահմանափակում ունեցող աշխատանքային միգրանտ

Այս մեջբերումներից ակնհայտորեն երևում է, որ ՌԴ մեկնող միգրանտների շրջանում արմատացած է այն դիրքորոշումը, որ Ռուսաստանում օրենքի շրջանցումը բնականոն երևույթ է: Ի համեմատություն սրա, նկատենք, որ ԵՄ կամ ԱՄՆ մեկնած միգրանտները, նույնիսկ նրանք, ովքեր այնտեղ հաստատվել, աշխատել կամ ապրել են օրենքների խախտմամբ, պատմելով այդ երկրներում իրենց փորձառության վերաբերյալ, այնուամենայնիվ նշում են, որ այդ երկրները «օրենքի երկրներ» են և օրենքը որոշակի բաներ է պարտադրում: Մի բան, որ ՌԴ մասին հազվադեպ է հնարավոր լսել: Այս հանգամանքը կարևոր է հաշվի առնել որպես գործոն, որը էականորեն ազդում է ՌԴ-ում ցանկացած օրենսդրական բարեփոխման վրա: Դիրքորոշումը, որ այդ երկրում կարելի է խախտել օրենքը մարտահրավեր է հանրային քաղաքականության համար, որը օրենքի դաշտում բարեփոխում է առաջարկում: Եվ քաղաքականությունը, որը հաշվի չի նստում նման մշակութային դիրքորոշման հետ ձախողվելու մեծ ռիսկեր ունի:

Այսօր ՌԴ մեկնող միգրանտների շրջանում արմատացած է վստահությունը, որ օրենքի շրջանցումը հնարավոր է և ավելի շահավետ է, քան օրենքի սահմանում մնալը: Ինչպես պատմում են Ռուսաստան մեկնող շատ միգրանտներ, իրենք տեսնում են, որ մինչ օրս օրենքի խախտումն ու շրջանցումը հնարավոր է և արդյունավետ, իսկ օրինական

գործընթացները բարդ են և հաճախ արդյունք չեն տալիս: Տեսնում են դեպքեր, երբ արգելք ունեցող անձինք անվանափախությամբ կամ կաշառքով կարողանում են գնալ, մինչդեռ ՌԴ ԴՄԾ-ն սահմանած օրինական քայլերը բավարար կարգավորված չեն, թեկուզ այն առումով, որ իրենց տեղեկություն չի տրվում արգելքի պատճառի և ժամկետի մասին: Այս իրավիճակը շարունակում է ամրապնդել այն դիրքորոշումը, թե ֆորմալ գործընթացները չեն գործում, իսկ ոչ ֆորմալները հնարավոր է գործեն:

Միգրանտների շահերի և իրավունքների պաշտպանության կարևորությունից ելնելով՝ կարևոր է շարունակել անկանոն միգրացիայի դեմ պայքարը և մասնավորապես՝ միգրանտների շրջանում օրինական և խելամիտ միգրացիայի քարոզումը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դեպի Ռուսաստան արտագնացությունը և այնտեղից ստացվող դրամական փոխանցումները շարունակում են կարևոր լինել թե՛ բազմաթիվ տնային տնտեսությունների և թե՛ ընդհանուր առմամբ երկրի տնտեսության համար, շատ կարևոր է շարունակել քայլերը, որոնք երկարաժամկետ առումով ուղղված են արգելք ունեցող անձանց թվի կրճատմանը: Այս առումով կարևոր է միգրանտների շրջանում անօրինական պրակտիկաների ընդունելիության և հնարավորությունների նվազեցմանը:

Այս ուղղությամբ քաղաքականության իրագործման տեսանկյունից կարևոր է նաև հաշվի առնել, որ միգրանտների կողմից Ռուսաստան մեկնելու արգելքի շրջանցումը հուսալի չի և դրա հետևանքները կարող են, թեկուզ ուշացած, բայց, այնուամենայնիվ իրենց զգացնել տալ հետագայում: Մինչ 2014թ. ՌԴ միգրացիայի քաղաքականության խստացումներն էական ազդեցություն չեն ունեցել Հայաստանից Ռուսաստան էմիգրացիայի վրա, այնուամենայնիվ դրանք կարող են իրենց ազդեցությունն ավելի ուշ դրսևորել:

Ուստի շատ կարևոր են քաղաքականության քայլերը, որոնք ուղղված կլինեն անկանոն միգրացիայի կանխարգելմանը և սև ցուցակների կրճատմանը, ինչպես նաև միգրանտների շահերի և իրավունքների պաշտպանությանը:

3. ՀՀ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ

2011թ.-ին վավերացվել է ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգը[18], որում ձևակերպված են միգրացիոն քաղաքականության 14 գերակա խնդիրներ: Նույն թվականին հաստատվել է նաև ՀՀ միգրացիայի պետական կարգավորման քաղաքականության հայեցակարգի իրականացման 2012-2016 թթ. Գործողությունների ծրագիրը (ԳԾ)[19]: Գործողությունների ծրագրում նշված են այն միջոցառումները, որոնք պետք է նպաստեն միգրացիայի հայեցակարգում առաջ քաշված գերակա խնդիրների իրագործմանը, մատնանշված են ակնկալվող արդյունքները, մասնավոր գործողությունները, ժամկետները, պատասխանատու գերատեսչությունները և գործողությունների կատարման մոնիթորինգի ցուցիչները:

Դեպի Ռուսաստան միգրացիային, մասնավորապես աշխատանքային միգրացիային, և վերջերս ՌԴ քաղաքականության փոփոխության ազդեցությամբ առաջացած նոր իրավիճակին վերաբերող հիմնական գործողություններն ամփոփված են հայեցակարգի 5-րդ և 7-րդ հիմնախնդիրներից բխող գործողություններում:

Հիմնախնդիր 5-ը վերաբերում է արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությանը: Առանձնացված է 6 գործողություն, որոնք կոչված են ծառայել այս նպատակին (ԳԾ 5.1-5.6 կետեր):

Հիմնախնդիր 7-ը վերաբերում է ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն միգրացիայի կանխարգելմանը, անկանոն միգրացիային առնչվող օրենսդրական դաշտի կատարելագործմանը, որին հատկապես ուղղված են ԳԾ 7.1 և 7.2 կետերը:

ՌԴ միգրացիոն նոր ռեժիմին ՀՀ քաղաքացիների հարմարմանը, ՀՀ քաղաքացիների՝ ՌԴ –ում անօրինական գտնվելու և աշխատելու դեպքերի նվազմանը և դրա պատճառով ՌԴ մուտք գործելու արգելքի հաղթահարմանն ուղղված քայլերը նախատեսված են ԳԾ նշված 8 կետերը և դրանցից բխող 36 ենթակետերով:

Դաշտային ուսումնասիրությունը և ՄՊԾ հրապարակած 2012թ., 2013թ. և 2014թ. հաշվետվությունները[20] հնարավորություն են տալիս գնահատելու այս ուղղությամբ իրականացված գործողությունները:

Այս տարիներին որոշակի գործողություններ են իրականացվել իրավական դաշտի կարգավորման ուղղությամբ: 2013թ. Հայաստանը ստորագրել է «Միգրանտ աշխատավորների և նրանց ընտանիքի անդամների իրավունքների պաշտպանության մասին» ՄԱԿ-ի 1990 թ. կոնվենցիան:

11.12.2013թ, ընդունվել է «Զբաղվածության մասին» օրենքը[21]: Օրենքն ունի մի քանի դրույթ, որոնք առնչվում են ներկա կամ հնարավոր աշխատանքային միգրանտներին: Նախ՝ այն

---

[18] http://www.smsmta.am/?id=948

[19] http://www.smsmta.am/?menu_id=120

[20] http://smsmta.am/?menu_id=149

[21] http://www.arlis.am/documentview.aspx?docID=87734

անդրադառնում է աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների հետ համագործակցությանը, որոնց մեջ կարող են լինել նաև արտերկրում աշխատանքի տեղավորման միջնորդներ (Հոդված 19-րդ): Երկրորդ՝ նշում է ՀՀ կառավարության ստանձնած աշխատուժի ներքին և արտաքին տեղաշարժի կարգավորման միասնական պետական քաղաքականության մշակման և իրականացման գործողությունը (Հոդված 18): Երրորդ՝ օրենքով անձի արտագնա աշխատանքի մեկնելու ռիսկը սահմանվում է, որպես աշխատաշուկայում անմրցունակ համարելու չափանիշ (Հոդված 22):

Օրենքի 19-րդ հոդվածը մասնավորապես անդրադառնում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Զբաղվածության պետական ծառայություն» գործակալության (ԶՊԾԳ) և գործակալության հետ հուշագիր ստորագրած աշխատանքի տեղավորման ոչ պետական կազմակերպությունների միջև աշխատանքային համագործակցությանը և մասնավորապես տեղեկատվության փոխանակմանը:

Սա անշուշտ կարևոր քայլ է, որով փորձ է արվում համագործակցային հարաբերություններ հաստատել դեպի Ռուսաստան միգրանտերի արտագնացության մեջ ներգրավված միջնորդների հետ և սրանով նպաստել ԳԾ 5.2 կետին: Մյուս կողմից այս քայլը աշխատանքային միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության տեսանկյունից գնահատելիս կարևոր է հաշվի առնել, որ Հայաստանից Ռուսաստան աշխատանքային միգրանտների հավաքագրմամբ, տեղափոխմամբ և Ռուսաստանում աշխատանքի տեղավորմամբ զբաղվող միջնորդները (բրիգադիրներ), որպես կանոն անհատներ են, ովքեր չունեն ֆորմալ գրանցում: Որպես նման միջնորդներ հաճախ հանդես են գալիս աշխատանքյաին միգրանտների բարեկամները կամ ծանոթները: Նրանք միջնորդում են նաև աշխատանքային միգրանտների գրանցման և փաստաթղթավորման հարցերում: ՌԴ մեկնած միգրանտների օրինական կեցության ու աշխատանքի ապահովելու հարցում նրանց դերը բավականին մեծ է, քանի որ հիմնականում նրանք են զբաղվում դրանց կարգավորման հարցերով: Կարևոր է հաշվի առնել, որ անբարեխիղճ միջնորդները, ովքեր օրենքից դուրս գործելու փորձառություն և մտադրություն ունեն և առավել ևս նրանք, ովքեր մտադիր են իրենց գործողությունների ընթացքում անտեսել աշխատանքային միգարնտների իրավունքնենրն ու շահերը, ԶՊԳԾ հետ հուշագիր չեն կնքի: Ուստի անհրաշեշտ է ուժեղացնել մեխանիզմները, որոնց միջոցով աշխատանքային միգրանտներին կարելի է պաշտպանել միջնորդների անօրինական գործողություններից:

Այս առումով կարևոր քայլ կարող է լինել աշխատանքի տեղավորման գործակալությունների մրցունակության բարձրացումը անհատ միջնորդների համեմատ, ինչի արդյունքում աշխատանքային միգրանտների արտագնացության կազմակերպման միջնորդությունը հնարավոր է ոչ ֆորմալ դաշտից տեղափոխել օրենքի դաշտ: Այս ուղղությամբ անհրաժեշտ է խրախոսել աշխատանքի տեղավորման կազմակերպություններին ընդլանել իրենց գործունեությունը՝ աշխատանք առաջարկելով նաև արտերկրյա՝ մասնավորապես ռուսաստանյան աշխատանքային շուկաներում: Սա իր հերթին կնպաստի ոչ ֆորմալ անհատ միջնորդների համեմատ գրանցված կազմակերպությունների մրցունակության բարձրացմանը: Սա կարող է ունենալ երկու ազդեցություն: Մի կողմից կնպաստի ցերկուլյար միգրացիային և աշխատուժի արտահանման նոր

շուկաների ձեռքբերմանը: Մյուս կողմից, դեպի Ռուսաստան արտագնացություն կազմակերպող անհատ միջնորդների համեմատ աշխատանքի տեղավորման գործակալությունների ավելի մրցունակ դառնալու պարագայում, այս քայլով հնարավոր կլինի անկանոն և անօրինական միգրացիայի ռիսկ պարունակող հարաբերություններն ու միջնորդությունը տեղափոխել օրինական դաշտ:

Անկանոն միգրացիայի հաղթահարման ուղղությամբ վերջին տարիներին իրագործվել են նաև տեղեկատվական և քարոզչական աշխատանքներ: Նկարահանվել և հեռուսատատեսությամբ տարածվել են սոցիալական հոլովակներ, որոնցում, մի այլ ուղերձների շարքում, կա նաև ծանոթներին չհավատալու կոչ պարունակող ուղերձ[22]: Այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս դիտարկումները, նման ուղերձը հայաստանյան մշակութային համատեքստում այնքան էլ միանշանակ չէ ընդունվում: Հայաստանի հատկապես գյուղական բնակավայրերում ազգակցական կապերը մեծ արժեք և հուսալիության երաշխիք են համարվում: Որպես կանոն ազգակցական կապը և ընդհանուր ծանոթի առկայությունը համարվում է վստահության գրավական: Նույնիսկ այն պարագայում, որ միգրանտներն իրենք նշում են, որ գիտեն բազմաթիվ դեպքեր, երբ միգրանտը խաբնվել է բարեկամի կամ ծանոթի կողմից, այնուամենայնիվ ընդհանուր ծանոթները մեր մշակութային միջավայրում դիտարկվում են որպես հաջող համագործակցության երաշխավորներ: Իսկ խարդախության պարագայում ընդհանուր ծանոթի առկայությունը դիտարկվում է որպես իրավիճակը հարթելու հնարավորություն: Նման տարածված դիրքորոշման համատեքստում ուղերձը, որը պարունակում է բարեկամների և ծանոթների խոսքին չվստահելու միտքը, թերահավատությամբ է ընդունվում:

Միգրանտների իրավունքների պաշտպանության հարցը դեռևս մարտահրավերներ շատ ունի: Իրավունքների և շահերի պաշտպանության առումով կարևոր են նաև կանխարգելիչ գործողությունները և մասնավորապես միգրանտների՝ իրենց իրավունքների և պարտավորությունների մասին տեղեկացնելը և մի շարք դիրքորոշումների փոփոխությունը:

Թվում է՝ ՌԴ մուտքի արգելքի խստացումը և դրա պատճառով առաջացած բարդությունները պետք է նպաստեին նրան, որ արգելք ունեցողները գնահատեին օրինական գործողությունների առավելությունները և գիտակցեին անօրինական գործողությունների հետևանքները՝ համապատասխան դասեր քաղելով: Սակայն դիտարկումները ցույց են տալիս, որ համապատասխան դասերը քաղված չեն և արգելք ունեցող մարդիկ ավելի շատ իրավիճակը գնահատում են որպես իրենց նկատմամբ անարդար գործողություն և ոչ այնքան, որպես իրենց կողմից օրենքի շրջանցման հետևանք: Շեշտադրումը, որ սև ցուցակներում հայտնվելը օրենքի խախտման արդյունք է, և որ պետք է դրանից համապատասխան դասեր քաղել, գրեթե բացակայում է նաև ԶԼՄ կողմից հարցի լուսաբանման մեջ: Մինչդեռ կարևոր է այն ուղերձը, որ մուտքի արգելք չունենալու համար անհրաժեշտ է միգրացիան օրինական կազմակերպել, իսկ անօրինական ուղիները, թեև հնարավոր են, բայց, երկարաժամկետ հեռանկարում բացահայտվում և պատժվում են:

[22] http://migrationcompass.am/node/3; http://migrationcompass.am/node/74

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատանքային միգրանտները ինչ-որ չափով տեղեկացված են իրենց պարտականությունների մասին: Սակայն նրանք վստահ չեն, որ օրենքի շրջանակում հնարավոր է հարցերը կարգավորել: Օրենքների որոշ պահանջներին ծանոթ չեն, ինչպես նաև ծանոթ չեն իրենց իրավունքներին և դրանց պաշտպանության մեխանիզմներին: Վերջին հարցն առավել լուրջ է, քանի որ այդ մեխանիզմներն լուրջ բարեփոխումների կարիք ունեն:

Անշուշտ վերջին տարիներին ձեռնարկվել են տեղեկացվածության բարձրացմանն ուղղված մի շարք միջոցառումներ: Մասնավորապես, ՄՊԾ-ն միգրացիոն կարգում տեղ գտած փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվություն է տարածում մամուլի ասուլիսիների, պաշտոնական կայքում տեղադրված նյութերի և այլ միջոցներով: Տեղեկատվության բարձրացման ուղղությամբ որոշակի աշխատանք է կատարվում նաև ոլորտում ներգրավված հասարակական կազմակերպությունների կողմից: Վերջին տարիներին նրանք նկարահանել և տարածել են մի շարք տեղեկատվական նյութեր, հանրային ծառայությանների հայտարարություններ և սոցիալական գովազդներ, պատրաստել են անօրինական միգրացիայի վերաբերյալ մի շարք հաղորդումներ, տպագրել և տարածել են պաստառներ և թերթոններ, ստեղծել են մի քանի ինտերնետային կայքեր, պատրաստել են լրագրողական նյութեր, կազմակերպել են միգրացիայի լուսաբանմանն ուղղված լրագրողական մրցույթ և այլն:

Այս ուղղությամբ տարվող աշխատանքները բավականին շատ են, և թվում է՝ օգտագործվում են տեղեկատվության տարածված հնարավոր բոլոր միջոցներն: Այնուամենայնիվ այս ոլորտում ևս դեռևս անելիքներ շատ կան: Տեսահոլովակները, տպագիր նյութերը, հաղորդումները բավականին կարևոր և գործուն միջոցներ են: Բայց մյուս կողմից ունեն շատ սահմանափակումներ:

Տպագիր նյութերը միշտ չէ, որ հասնում են անմիջական շահառույին՝ միգրանտին կամ նրա տնային տնտեսության անդամին: Ինչպես նշված է նաև ԳԾ մոնիթորինգի հաշվետվություններում, որպես կանոն հրապարակված տեղեկատվական նյութերը փոխանցվում են անուղղակի շահառուներին՝ ոլորտի կազմակերպություններին, սակայն չկան մեխանիզմներ, որոնց միջոցով, կարելի է գնահատել, թե դրանք որքանով են հասնում անմիջական շահառուին: Ինչ վերաբերում է ստեղծված կայքերին, ապա այս առումով կարևոր է հաշվի առնել աշխատանքային միգրանտների սոցիալ-մշակութային նկարագիրը՝ երիտասարդ և միջին տարիքի միջին մասնագտական կրթություն ունեցող արհեստավոր տղամարդիկ: Նրանք որպես կանոն, համակարգիչն ու ինտերնետը հազվադեպ են օգտագործում տեղեկատվություն ստանալու նմատակով: Հաղորդումները և տեսահոլովակները ևս, ինչպես ցույց է տալիս վերջերս կատարված գնահատումը, ավելի արդյունավետ կլինեն, եթե ավելի մոտ լինեն միգրանտների սոցիալ-մշակութային առանձնահատկություններին:

Կարևոր է հաշվի առնել, որ տեղեկատվական արշավի մեջ ներգրավված մասնագետները կիսում են նույն մասնագիտական առաջնահերթությունները և լեզուն, որն անշուշտ վերաբերում է աշխատանքային միգարտնների բուն կարիքներին, սակայն վերջինների առօրեայից և նրանց սոցիալ-մշակութային համատեքստով բավականին կտրված է, իր

լեզվով, արժեքնեով և առաջնահերթություններով: Մի բան է, երբ մասնագետը խոսում է միգրացիայի և միգրանտի խնդիների մասին, որոնց ծանոթացել է դրա վերաբերյալ ուսումնասիրություններ ընթերցելով, մեկ այլ բան է այդ խնդիրների միջով անցած միգրանտի փորձառությունը: Այս տարբերությունը հաճախ անջրպետ է ստեղծում տեղեկատվական ուղերձը ձևակերպողների և դրանք ընկալողների միջև: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նկարահանված հոլովակները լսարանի կողմից հաճախ գնահատվում են որպես ոչ անկեղծ և իրականությունից կտրված, քանի որ դրանցում շատ մեծ է շեշտադրումը օրինական միգրացիայի առավելությունների և անօրինական միգրացիայի վտանգների վրա: Մասնագիտական տեսանկյունից այս շեշտադրումը լիովին արդարացված է, սակայն, մյուս կողմից տասնյակ տարիների փորձը մարդկանց մեջ ձևավորել է ուրույն առաջնահերթություններ, արժեքներ, չգրված խաղի կանոններ, որոնք տարիներ շարունակ աշխատանքային միգրանտներին ցույց են տվել չգրանցված աշխատանքի դրական կողմերը, փոխշահավետությունը և օրինականի բարդությունները: Կան մի շարք մշակութային առանձահատություններ, որոնք բարդացնում են օրինական միգրացիայի վերաբերյալ մասնագետների շրջանում ռացիոնալ համարվող հիմնավորումների ազդեցությունը լսարանի վրա: Օրինակ՝ գրավոր պայմանագիր ունենալու կոչը մի միջավայրում, որտեղ խիստ արժևորվում և կարևորվում է բանավոր պայմանավորվածությունը, իսկ գրավոր պայամանվորվածության մասին խոսակցությունը դիտարկվում է որպես անվստահության արտահայտում, դժվար է համոզիչ դարձնել: Ուստի այն պետք է ուղեկցվի նոր մշակույթի ձևավորմանն ուղղված մի շարք այլ նկարագրություններով և ուղերձներով:

Կարևոր է ավելի ստեղծագործ մոտեցում ցուցաբերել տեղեկացվածության բարձրացմանն ուղղված միջոցառումների կազմակերպման հարցում, անհրաժեշտ է մեծացնել գործում ներգրավված կողմերի բազմազանությունը՝ մասնակից դարձնելով տարբեր ոլորտների, տարբեր սոցիալական խմբերի ներկայացուցիչները, ներգրավելով ոչ միայն միգրացիայի ոլորտի ՀԿ-ներ, այլ նաև այլ հարակից ոլորտների մասնագետներ: Պետք է նաև ընդլայնել միջոցառումների բազմազանությունը և գործիքակազմը: Օրինակ իրականացնել, համայնքային ցուցահանդեսներ, դպրոցում թեմատիկ քննարկումներ, ֆլեշ մոբեր և այլն:

Շատ կարևոր է նաև հաշվի առնել, որ մշակութային փոփոխությունները խիստ դժվար իրագործելի են, եթե նոր մշակութային պրակտիկանների համար չկան ինստիտուցինալ պայմաններ: Շատ դժվար է մարդկանց քարոզչության միջոցով համոզել, օրինակ, կաշառք չտալ, եթե այն վերցնում են գործընթացն արագացնելու դիմաց: Ուստի կարևոր է լուծումներ գնել ինստիտուցիոնալ հարթությունում խնդիրները նվազեցնելու համար:

Արտագնա աշխատանքի մեկնող ՀՀ քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ ԳԾ-ում առանձնացված է 5.3 գործողությունը, որով նախատեսվում է օտարերկրյա պետությունների աշխատաշուկաների ուսումնասիրություն՝ նստավայր պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների ոլորտում լիազոր մարմինների միջոցով:

Աշխատաշուկայի մասին տեղեկատվության տարածումը կարևոր է աշխատանքային միգրանտների շահերի պաշտպանության տեսանկյունից: Սակայն ինչ վերաբերում է ՌԴ-

ին, ապա ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այնտեղ մեկնած աշխատանքային միգրանտները որպես կանոն աշխատանք գտնելու դժվարություն կամ աշխատաշուկայի մասին տեղեկատվության բացեր գրեթե չեն ունենում:

Մյուս կողմից կարևոր են այնպիսին գործողությունները, որոնք ավելի ուղղակիորեն են վերաբերում աշխատանքային միգրանտների իրավունքների պաշտպանությանը: Այս ուղղությամբ կարևոր է հատկապես ՌԴ-ում միգրանտների իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման ուղղությամբ համագործակցությունների ձեռքբերումը: Այս ուղղությամբ կարևոր քայլ կարող է լինել աշխատանքային միգրանտների հիմնական ուղղություն հանդիսացող քաղաքներում հայերի միությունների, տեղական և միջազգային իրավապաշտպան և խորհրդատվություն տրամադրող կազմակերպությունների հետ համագործակցային հարաբերությունների ձևավորումը և նրանց մասին տեղեկատվության տարածումը:

Կարևոր է նշել, որ ՌԴ-ում միգրացիայի կարգավորման օրենսդրության մեջ տեղ գտած փոփոխությունների և խստացումների հետևանքով ՀՀ քաղաքացիների աջակցության և նրանց շահերի պաշտպանությանն ուղղված կան ՄՊԾ կողմից իրականացված միջոցառումներ, որոնք հաշվետվություններում տեղ չեն գտել: ՄՊԾ-ն բացվել է խորհրդատվություն տրամադրող ծառայություն: Քանի որ ՌԴ միգրացիոն քաղաքականության հետ կապված ՀՀ քաղաքացիներին ամենից հուզող հիմնահարցը մնում է «սև ցուցակում» նրանց ընդգրկվածությունը, ուստի 2014 թ. ՄՊԾ-ն ՌԴ դաշնային միգրացիոն ծառայության հետ պայմանավորվածություն է ձեռք բերել արգելք ունեցող անձանց անհատական հայցեր ուղղելու նրանց՝ արգելքը հանելու հնարավորությունը քննարկելու խնդրանքով:

2015թ. մարտի 6-ին տված մամուլի ասուլիսին ՄՊԾ պետ Գ. Եգանյանը, նշել է. «Փետրվարի 18-ին ՀՀ ՏԿԱԻ նախարար Արմեն Երիցյանը նամակով դիմել է ՌԴ դաշնային ծառայության պետին՝ ՀՀ քաղաքացիների դիմումներին դրական մոտեցում ցուցաբերելու համար: Երկու ծառայությունների միջև ուղիղ կապի հաստատումը մեծ ձեռքբերում է: Եթե նախկինում մեր քաղաքացիների՝ ՌԴ մուտք գործելու արգելքը վերացնելու վերաբերյալ գրված դիմումները դաշնային միգրացիոն ծառայություն հասնում էին դիվանագիտական և այլ խողովակների միջոցով, ինչը բավական երկար ժամանակ էր պահանջում, ապա այսօր այդ դիմումներն ուղարկվում են անմիջապես ՌԴ դաշնային միգրացիոն ծառայություն: Երկու ծառայությունների պայմանավորվածության համաձայն՝ անխտիր դրական պատասխան կստանան հետևյալ հինգ կետերի պահանջներից որևէ մեկին համապատասխանող քաղաքացիների դիմումները. 1) եթե տվյալ քաղաքացին ունի ՌԴ քաղաքացի հանդիսացող և Ռուսաստանում բնակվող ընտանիքի անդամ կամ հարազատ, 2) եթե քաղաքացին ՌԴ-ում կրթությունը շարունակելու խնդիր ունի, 3) եթե քաղաքացին ՌԴ է մեկնում բուժման կամ խնամակալության հարցերով, 4) եթե քաղաքացին ՌԴ-ում

ունի իր անունով գրանցված սեփականություն, 5) եթե դիմող քաղաքացին նախկինում ՌԴ-ում ունեցել է աշխատանքի թույլտվություն»[23]:

Ինչպես նշել է ՄՊԾ փորձագետը մինչ օրս նրանք ստացել են բազմաթիվ հայցեր:

> *«Մենք ունենք պայմանավորվածություն ՌԴ-ի Դաշնային միգրացիոն ծառայության հետ: Հավաքում ենք քաղաքացիների դիմումները և ուղղարկում նրանց: Նրանք վերանայում են այդ դիմումները և պատասխաններն ուղղարկում մեզ: Դա շատ մեծ ծավալի աշխատանք է, քանի որ մեզ դիմողները շուրջ չորս հազարի են հասնում»:*

ՄՊԾ ներկայացուցիչ

Փորձագետը նշել է, որ մինչև 2015թ. հունվար ամիսը ստացվել է 3600 դիմում, որից 3320 դիմումներն ուղղարկվել են ՌԴ դաշնային միգրացիոն ծառայություն: Պատասխան ստացվել է 1970 անձի վերաբերյալ, որից 460 դրական ելքով, ինչը կազմում է դիմումների շուրջ 14%:

Այնուամենայնիվ, նույնիսկ դրական պատասխանի դեպքում եղել են դեպքեր, երբ անձը, հասնելով ՌԴ սահմանին, չի կարողացել մուտք գործել երկիր: Սա փորձագետները բացատրում են նրանով, որ ՌԴ ԴՄԾ-ից վերանայման արդյունքները բավականին ուշ են հասնում սահմանապահ ծառայություններին:

> *«Եղել են այնպիսի դեպքեր, երբ քաղաքացին դրական պատասխանը ձեռքին գնացել է և սահմանին կրկին խնդիրներ ունեցել, պարզվել է, որ սահմանին այդ ինֆորմացիան դեռևս չի հասել: Եվ սա ևս լուրջ խնդիր է, որ մեր քաղաքացիներին վրդովում է և անորոշ իրավիճակում թողնում: Համաձայն մեր բանավոր պայմանավորվածության դիմումի քննարկման և պատասխանի գործընթացը կարող է տևել 2-3 ամիս և մինչ այդ պատասխանը հասնում է սահմանապահ մարմիններին, տևում է ևս երկու ամիս»:*

ՄՊԾ ներկայացուցիչ

Միգրացիոն ռեսուրս կենտրոնները (ՄՌԿ) ևս որոշակի աշխատանք են տանում այս ուղղությամբ: Քաղաքացիները հաճախ դիմում են կենտրոններ հատկապես ստուգելու արդյոք իրենք ներգրավված են «սև ցուցակների» մեջ թե ոչ:

> *«Մենք ամեն օր սպասարկում ենք 20-30 քաղաքացիների, ովքեր դիմում են մեզ ստուգելու, թե արդյոք իրենք սև ցուցակներում են գտնվում: Մենք այստեղ ՌԴ-ի դաշնային միգրացիոն ծառայության կայքի միջոցով ստուգում ենք կամ կայքի հասցեն տալիս ենք քաղաքացիներին, որպեսզի իրենք ինքնուրույն ստուգեն»:*

Արմավիրի ՄՌԿ տնօրեն

[23] http://www.mta.gov.am/hy/news/item/2015/03/06/7/

ՄՌԿ-ները հիմնականում տեղեկատվական գործառույթ ունեն: Նրանք «սև ցուցակում» ընդգրկված անձանց ուղղորդում են մարզպետարան ՌԴ ԴՄԾ-ին ուղղված դիմելու գրելու համար: Բացի այդ մարզերում գործող ՄՌԿ-ներն իրենց մարզերի համայնքներում իրականացնում են տեղեկատվական արշավներ որի ընթացքում տեղեկատվություն են տարածում միգրացիոն քաղաքականությունում տեղ գտած փոփոխությունների վերաբերյալ:

Կարևոր է նշել նաև, որ թեև կան միգրանտներին հետաքրքրող տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրող ծառայություններ, սակայն հաճախ շահագրգիռ կողմերը և մասնավորապես միգրանտները դրա մասին տեղեկացված չեն: Ուստի կարևոր է քայլեր ձեռնարկել տեղեկատվական և խորհրդատվական ծառայությունների մասին տեղեկատվություն տարածելու ուղղությամբ:

Այսպիսով բավականին քայլեր են ձեռնարկվում միգրանտների շահերի և իրավունքների պաշտպանության ուղղությամբ, սակայն դրանք կարծես ad hoc լուծումներ են և չեն դառնում քաղաքականության մի մաս: Շատ միջոցառումներ դեռևս ձեռք չեն բերել հղկված մեխանիզմներ. ինստիտուցիոնալ հնարավորությունների հզորացման կարիք կա:

Միգրանտների իրավունքների պաշտպանությանը և անկանոն միգրացիայի հաղթահարմանն ուղղված շատ միջոցառումներ հաճախ նախաձեռնվում են հասարակական կազմակերպությունների կողմից, որոնք, որպես կանոն, ինստիտուցիոնալ հիմքեր և շարունակականություն ձեռք չեն բերում: Օրինակ կազմակերպվում են տեղեկատվական միջոցառումներ՝ սեմինարներ, հանդիպումների, և այլն, որոնց մեծ մասը միանգամյա է և միջնորդավորված բնույթ ունի (սեմինաչներ ՀԿ-ների համար, մրցույթներ ԶԼՄ-ների համար, տեղեկատվական գրքույկներ, որոնք տարածվում են կազմակերպությունների շրջանում և այլն): Կարևոր է ձևավորել կայուն գործող մեխանիզմներ, որոնց միջոցով տեղեկատվությունը միշտ հասանելի կլինի անմիջական շահառուներին՝ ներկայիս կամ հնարավոր միգրանտին: Եվ կարևոր է տեղեկատվության աղբյուրը հնարավորինս մոտեցնել նրանց:

Այս առումով կարևոր ռեսուրս են տեղական ինքնակառավարման մարմինները, որոնց դերը միգրանտների տեղեկատվության բարձրացման գործում կարող է բավականին մեծ լինել: Տարբեր կազմակերպությունների կողմից կազմակերպվում են միգրացիայի հարցերի վերաբերյալ սեմինարների, որոնց հիմնական մասնակիցներն են ՀԿ-ները, մինչդեռ այդ տեղեկատվությունը կարևոր է տարածել աշխատանքային միգրանտներին առավել մոտիկ կանգնած միջնորդների միջոցով: Այս առումով նպաստող գործոն է այն, որ ՄՊԾ-ն Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության կառույց է: Ուստի կարող է օգտագործել նախարարության ադմինիստրատիվ խողովակները և ռեսուրսները ՏԻՄ-երի ներկայացուցիչների հետ կապն ապահովելու և նրանց տեղեցվածության բարձրացման միջոցառումները կազմակերպելու գործում: ՏԻՄ ղեկավարների պարբերական հանդիպումները մարզպետարաններում կարելի է օգտագործել միգրանտերին վերաբերող տեղեկատվությունը ներկայացնելու համար:

Առաջարկվող միջոցառման առավելություններից է նաև դրա պակաս ծախսատարությունը: Ինչպես նշված է ԳԾ հաշվետվությունների մեջ ՀՀ կառավարութ-

յունը նպատակահարմար չի համարել բյուջեում գումար հատկացնել միգրացիայի վերաբերյալ տեղեկատվություն պարունակող թերթոնների տպագրության և տեղեկատվական այլ միջոցառումների համար: Մինչդեռ ՀՀ ՏԿԱԻՆ ադմինիստրատիվ ռեսուրսների և խողովակների միջոցով հնարավոր է միգրանտներին վերաբերող հարցերի մասին տեղեկատվությունն էականորեն մոտեցնել միգրատներին և նրանց ընտանիքներին:

Ներկա և հնարավոր միգրանտների տեղեկատվության բարձրացման գործում ՏԻՄ ներկայացոցիչների ներգրավվածությունն ունի ևս մեկ առավելություն: Նրանք կարող են տեղեկատվության փոխանցման արդյունավետ միջնորդ լինել և նպաստել հաղթահարելու միգրացիայի ոլորտի մասնագետների և միգրանտների միջև մասնագիտական, արժեքային և «լեզվական» անջրպետը, որի մասին խոսվել է վերը: ՏԻՄ ներկայացուցիչները մի կողմից ունեն համեմատաբար մեծ փորձառություն ադմինիստրատիվ օղակների, տարբեր ոլորտների պաշտոնատար անձանց և ՀԿ ներկայացուցիչների հետ շփվելու, մյուս կողմից բավականին լավատեղյակ են միգրանտների առօրեական միգրացիոն փորձառությանը, ուստի կարող են երկու կողմերին էլ օգնել ավելի հաղորդակից դառնալ մյուս կողմից դիրքորոշումներին և խնդիրներին:

ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ

Հայաստանից Ռուսաստան մեկնող էմիգրանտների շահերի և իրավունքների պաշտպանության և Հայաստանից սկիզբ առնող ականոն միգրացիայի կրճատման ուղղությամբ ներկայիս քաղաքականության վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ ուղղությամբ իրականացվում են մի շարք գործողություններ: Միգրացիայի ներկայիս քաղաքականությունը, ըստ էության, ձևակերպում է արդի հիմնախնդիրները և սահմանում դրանց ուղղված գործողություններ: Այնուամենայնիվ, ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ անհրաժեշտ է նախաձեռնել քաղաքականության նոր գործողություններ, ինչպես նաև քայլեր ձեռնարկել որոշ գործողությունների արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Ներկայացված վերլուծության արդյունքում մշակվել են քաղաքականության մի շարք առաջարկների, որոնք ներկայացված են ստորև:

1. Ներկայիս և հնարավոր միգրանտների համար ավելի հասանելի և մատչելի դարձնել ա)խորհրդատվությունը միգրացիայի կարգավորման, բ) տեղեկատվությունը միգրացիայի օրինական կազմակերպման, գ) միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության ծառայությունների վերաբերյալ:

1.1. Արտագնացության բարձր ցուցանիշներ ունեցող ՏԻՄ-երին ներգրավել միգրանտների՝ տեղեկատվական և խորհրդատվական գործընթացներում՝ մոբիլիզացնելով ՀՀ ՏԿԱԻՆ ադմինիստրատիվ խողովակներն ու ռեսուրսները: Ջանքեր ներդնել ՏԻՄ ներկայացուցիչներին՝ ներկա և հնարավոր միգրանտներին առնչվող հարցերի վերաբերյալ գործնական գիտելիք հաղորդելու ուղղությամբ և նրանց դարձնել տեղեկատվության փոխանցման միջնորդ:

1.2. Ձևավորել մեխանիզմներ՝ ուղղված ՄՌԿ աշխատակիցների և միգրանտների հարցերին անդրադարձող մյուս կառույցների աշխատակիցների գիտելիքների և հմտությունների պարբերական բարձրացման ուղղությամբ:

1.3. Միգրանտների վերաբերող տեղեկատվություն և խորհրդատվություն տրամադրող ծառայությունների և իրավունքների պաշտպանության և խախտված իրավունքների վերականգնման հնարավորությունների մասին տեղեկատվությունը տարածել և բարձրացնել քաղաքացիների տեղեկացվածությունը դրանց առկայության վերաբերյալ:

1.4. Փոխել տեղեկատվական արշավների գործիքակազմը և մոտեցումը՝ դրանք ավելի մոտեցնելով հնարավոր և ներկայից միգրանտների առօրեականությանը և լեզվին՝ ներգրավելով հնարավորինս տարբեր և բազմադիսցիպլինար մասնակիցների, ինչպես նաև տեղեկատվությունը տրամադրելուց զատ արժեքների և դիրքորոշումների փոփոխություն առաջացնող ուղերձներ մշակել:

2. Խրախոսել աշխատանքի տեղավորման կազմակերպություններին ընդլայնել իրենց գործունեությունը՝ աշխատանք առաջարկելով նաև արտերկրյա՝ մասնավորապես ռուսաստանյան աշխատանքային շուկաներում և նպաստել ոչ ֆորմալ անհատ միջնորդների համեմատ մրցունակության բարձրացմանը: Սա կարող է ունենալ երկու ազդեցություն: Մի կողմից կնպաստի շրջանառու (circular) միգրացիային և աշխատուժի արտահանման նոր շուկաների ձեռքբերմանը: Մյուս կողմից, դեպի Ռուսաստան արտագնացություն կազմակերպող անհատ միջնորդների համեմատ աշխատանքի տեղավորման գործակալությունների ավելի մրցունակ դառնալու պարագայում, այս քայլով հնարավոր կլինի անկանոն և միգրացիայի ռիսկ պարունակող հարաբերություններն ու միջնորդությունը տեղափոխել օրինական դաշտ:

3. Համագործակցային հարաբերություններ հաստատել Ռուսաստանում աշխատող իրավապաշտպան կազմակեչպությունների հետ: ՀՀ քաղաքացի հանդիսացող միգրանտների իրավունքների և շահերի պաշտպանության տեսանկյունից կարևոր քայլ է Ռուսաստանում (մասնավորապես հայ միգրանտների բաբարձր ցուցանիշ ունեցող քաղաքներում) համագործակցային հաստատություններ հաստատել իրավապաշտպան և խորհրդատվական կազմակերպությունների հետ, ովքեր կարող են աջակցել միգրանտներին տեղում պաշտպանել իրենց իրավունքները: Այս քայլին կարող են նպաստել Ռուսաստանի հայկական միությունները և դիվանագիտական ներկայացուցչությունները:

4. Ռուսաստանի գործընկերների շրջանում մշտապես բարձրացնել ՌԴ-ում միգրացիային առնչվող մարմիններում կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների և դրանց արդյունավետության բարձրացման անհրաժեշտության հարցը: Անկանոն միգրացիայի կրճատման և միգրանտների իրավուքների պաշտպանության հարցի լուծումը տեղեկատվության բարձրացումից և դիրքորոշումների փոփոխությունից զատ պահանջում է ինստիտուցիոնալ նախադրյալներ: Տեղեկատվական և քարոզչական միջոցառումները պակաս արդյունավետ կլինեն, եթե չձևավորվեն ստացված տեղեկատվության կյանքի կոչման ինստիտուցիոնալ պայմանները: Կարևոր է հատկապես այս ոլորտում ոլորտում ոչ ֆորմալ պրակտիկաների և կոռուպցիայի նվազեցման ուղղությամբ քայլերի ձեռնարկումը:

5. Միգրացիայի հայեցակարգի գործողությունների ծրագրում ավելացնել գործողությունների ազդեցությունը չափող չափանիշ, ինչպես նաև անկախ մարմնի կողմից իրականացնել ազդեցության գնահատում: Ներկայիս գործողությունների ծրագրում նշված է մոնիտորինգի ցուցանիշը, որը սակայն մատնանշում է միայն գործողության հնարավոր արդյունքը (output), բայց ոչ՝ ազդեցությունը (impect): Օրինակ ԳԾ 7.1 կետով սահմանված գործողությունն է ՀՀ-ից սկիզբ առնող անկանոն միգրացիայի վտանգի և հետևանքների մասին բնակչության, նրանց հետ անմիջական կապի մեջ գտնվող պետական կառույցների աշխատողների իրազեկության բարձրացում, այս հարցում զանգվածային լրատվամիջոցների դերի բարձրացում:

Որպես մոնիթորինգի ցուցանիշ սահմանված են, անցկացված սեմինարների քանակը, լրատվական նյութերի քանակը և այլն, որոնք հանդիսանում են գործողության արդյունք, սակայն սահամնված չէ, ազդեցությանը չափող չափորոշիչ՝ այն է, թե արդյունքում որքանով բարձրացավ բնակչության տեղեկացվածությունը: Առավել ևս կարևոր է գնահատել թե սահմանված գործողությունների շրջանակում իրագործված միջոցառումները, որքանով են նպաստել այն գերակա խնդրի լուծմանը, որի համար գործողությունները ձեռնարկվել են: Տվյալ դեպքում՝ թե որքանով է նվազել Հայաստանից սկիզբ առնող անկանոն միգրացիան: